



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2016թվական N 54-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ-4 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

- Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին >> ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով, համայնքի ավագանին որոշում է՝
1. Հաստատել Թալին համայնքի ավագանու 2016թ. դեկտեմբերի 16-ի թիվ-4 հերթական նիստի օրակարգը հետևյալ տեսքով՝
 - 1) Թալին համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագիրը հաստատելու մասին .
 - 2) Թալին քաղաքի վարչական տարածքում 2017թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը հաստատելու մասին .
 - 3) Թալին համայնքի ղեկավարի վարձատրության չափը հաստատելու մասին .
 - 4) Թալինի համայնքապետարանի աշխատակազմի և ՀՈԱԿ-ների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին .
 - 5) Թալին համայնքի սեփականություն հանդիսացող շինությունների վարձակալության վճար՝ սահմանելու մասին
 - 6) 2017թվականին Թալինի ՀՈԱԿ-ների կողմից մատուցվող ծառայությունների համար վճարներ սահմանելու մասին .
 - 7) Թալինի համայնքապետարանի և ՀՈԱԿ-ների տարեվերջյան գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին .
 8. Թալինի համայնքապետարանի 2016թ. տարեկան բյուջեում փոփոխություններ կատարելու մասին .
 - 9) Թալին համայնքի 2017թ. տարեկան բյուջեն հաստատելու մասին .
 - 10) Թալին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ –վաճառքով օտարելու մասին.
 - 11) Թալինի համայնքապետարանի աշխատակազմի ՔԿԱԳ ԱՍ կանոնադրությունը հաստատելու մասին
 - 12) Գույքահարկի արտոնություն տրամադրելու մասին :
 - 13) Թալինի Արոսօգտագործողների միավորում սպառողական կոոպերատիվին փոխատվությամբ գումար տրամադրելու մասին :
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից :

Կողմ -8

Դեմ -0

Չեղնակահ -0

1. Արամյան Արամ
2. Ավետիսյան Գաբրիել
3. Գասպարյան Արարատ
4. Գալստյան Մարտուն
5. Գրիգորյան Աշոտ
6. Գրիգորյան Նարեկ
7. Գրիգորյան Մանվել
8. Գևորգյան Թամարա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



Ս. ԿՐԱՄՅԱՆ



ք. Թավիճ

26 դեկտեմբերի 2016թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

26 դեկտեմբերի 2016թվական N 55-Ն

**ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետի, 32-րդ հոդվածի 2-րդ կետի և « Իրավական ակտերի մասին » ՀՀ օրենքի 72-րդ հոդվածի պահանջներով , **համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հաստատել Թալին համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Թալին համայնքի ավագանու 20.12.2014թ. «Թալին համայնքի 2015-2018թթ. զարգացման քառամյա ծրագիրը հաստատել մասին » թիվ 75-Ն որոշման 1-ին կետը :
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2017թվականի հունվարի 1-ից :

- | | | |
|----------------------|--------|-----------------|
| Կողմ -7 | Դեմ -0 | Ձեռնպահ -1 |
| 1. Արամյան Արամ | | Գևորգյան Թամարա |
| 2. Ավետիսյան Գաբրիել | | |
| 3. Գասպարյան Արարատ | | |
| 4. Գալստյան Մարտուն | | |
| 5. Գրիգորյան Աշոտ | | |
| 6. Գրիգորյան Նարեկ | | |
| 7. Գրիգորյան Մանվել | | |



Ս. ԱՐԱՄՅԱՆ
Ս. ԱՐԱՄՅԱՆ

26 դեկտեմբերի 2016թ.

Հավելված

Թալին համայնքի ավագանու 2016թ-ի
դեկտեմբերի 26-ի թիվ 55-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ

ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարին կից, խորհրդակցական կարգով գործող
ՀՀԶԾ կառավարման հանձնաժողովի կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Ս. Արամյանի կողմից
Հաստատվել է՝ համայնքի ավագանու 26.12.2016 թ. թիվ 55-Ն որոշման

ԹԱԼԻՆ 2016թ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 1.Ներածություն - 3
- 2.Համայնքի իրավիճակի նկարագրություն - 4
 - 2.1.Համայնքի ընդհանուր նկարագրություն -4
 - 2.2.Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը -5
 - 2.3.Համայնքում իրականացվող ծրագրերը -9
 - 2.4.Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները- 11
 - 2.5.Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ - 12
 - 2.6.Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈԻԹՀՍ) վերլուծություն - 12
- 3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում - 13
 - 3.1.Համայնքի զարգացման տեսլական - 13
 - 3.2.Համայնքի զարգացման անմիջական նպատակներ - 14
- 4.ՀՀԶԾ ֆինանսավորում - 22
- 5.ՀՀԶԾ (մշտադիտարկում) մոնիթորինգ-22
- 6.ՀՀԶԾ վերաբերյալ իրազեկում-23
- 7.ՀՀԶԾ իրականացումը-23
- 8.ՀՀԶԾ գնահատում-23
- 9.ԵԶՐԱՓՈՎԿՈՒՄ-24
- Հավելված 1 - Ծրագրերի անձնագրեր -25
- Հավելված 2 - 30

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ Արագածոտնի մարզի Թալին քաղաքային համայնքի 2017-2021թթ. զարգացման հնգամյա ծրագիրը (ՀՀԶԾ) մշակվել է՝ հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ-երի) իրավասություններն ու լիազորությունները նրանց գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀՀԶԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և ծրագրային հիմքերը:

Ներկայացվող ՀՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Թալին համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: Այն մշակվել է մասնակցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահագրգիռ բոլոր կողմերի առաջարկությունները: Հարցումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին հուզող խնդիրները, դրանք գնահատվել են համայնքային ժողովի ժամանակ համայնքային ակտիվ խմբերի կողմից և դասակարգվել ըստ առաջնահերթության:

ՀՀԶԾ-ն իրենից ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավարման գործընթացի իրականացում: ՀՀԶԾ-ն ներառում է նաև Թալին համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները: Թալին համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Թալինի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիրը հանդիսանալու է համայնքի զարգացման ամենօրյա փաստաթուղթը:

Առաջիկա հինգ տարիների համար Թալին համայնքի զարգացման հիմնական ուղղությունները և գերակա ոլորտներն են՝

- Գյուղատնտեսության զարգացումը, որը ենթադրում է հողօգտագործման ձևերի արդիականացում, ոռոգման համակարգի ներդրում, գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծում, մշակովի հողերի ավելացում, գյուղատնտեսական արտադրանքի մշակման փոքր և միջին ձեռնարկությունների ստեղծում:
- զբոսաշրջության զարգացում և սպասարկող ծառայությունների ոլորտի ընդլայնում
- համայնքում առկա գործող արտադրական ձեռնարկությունների արտադրական կարողությունների ընդլայնում և գործունեությունը դադարեցրած արտադրական ձեռնարկությունների վերագործարկում :Որպես զարգացման ծրագրում ուշադրության արժանի հնարավոր ուղղություններ, պետք է նշել աղամանդագործությունը, ոսկերչությունը և ժամացույցների արտադրությունը, քանի որ աշխատատեղերի ստեղծումն ակնկալվում է հիմնականում այդ ոլորտներում և համայնքում առկա են նշված ոլորտներում աշխատանքի փորձ ունեցող մասնագետներ և բանվորներ: Նախկինում համայնքի տարածքում գործել են «Հայմոթեք» ՓԲ և «Հայք» ժամացույց և ոսկերչություն» ՍՊ ընկերությունները:

Համայնքի զաչգացման հիմնական պրոբլեմները, խոչընդոտները և դրանց ծնող պատճառներն են՝

- աշխատատեղերի բացակայությունը, որի պատճառով համայնքում փաստացի բնակվող բնակչության թիվը գնալով նվազում է, կրթված երիտասարդները թողնում են համայնքը և գնում Երևան կամ արտասահման
- ոռոգման համակարգի բացակայությունը, որի պատճառով գյուղատնտեսական նշանակության հողերը մշակվում են ոչ ամբողջությամբ, իսկ մշակվող հողերից ստացվող բերքի արդյունավետությունը ցածր է:
- համայնքի ֆինանսական ռեսուրսների սղությունը
- բնակարանային շինարարության բացակայությունը և այլն:

Ծրագիրը բաղկացած է 3 գլխից:

1-ին գլխում ներկայացվում է համայնքի իրավիճակի նկարագրությունը՝ համայնքի ընդհանուր նկարագրությունը, սոցիալ տնտեսական իրավիճակը, իրականացվող ծրագրերը, ֆինանսական իրավիճակի նկարագրությունը և ֆինանսական կանխատեսումները, զարգացման խոչընդոտները և դժվարությունները, համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈԻԹՀՍ) վերլուծությունը:

2-րդ գլխում ներկայացվում է նպատակների սահմանումը և գործողությունների պլանավորումը՝ համայնքի զարգացման տեսլականը, անմիջական նպատակները:

3-րդ գլխում ներկայացվում է ծրագրի ֆինանսավորումը:

2. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1. ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Թալին քաղաքը գտնվում է Արագած լեռան հարավ-արևմտյան փեշերին, ծովի մակերևույթից 1585 մետր բարձրության վրա: Հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 70 կմ, մարզկենտրոնից՝ 48 կմ: Թալին քաղաքով է անցնում է Հյուսիս-Հարավ միջպետական նշանակության ավտոմայրուղին: Թալին քաղաքը նախկինում եղել է Թալինի շրջանի վարչական կենտրոնը:

Բնակլիմայական պայմանները փոփոխական են, հիմնականում ցամաքային և ոչ բարենպաստ գյուղատնտեսության համար: Հողերը հիմնականում ոռոգովի չեն և բերքատվությունը մեծ կախում ունի տարվա տեղումներից: Ձմեռը չափավոր ցուրտ է, ամառը զով, երբեմն էլ շոգ ու երաշտ: Գարունը շուտ է բացվում, աշունը ուշ վերջանում: Ձնածածկույթը տարածքում տևական չի լինում, ուղեկցվում է բքի վերածվող ուժեղ քամիներով: Գարնանը լինում են տեղատարափ անձրևներ: Տարեկան մթնոլորտային տեղումների քանակը տատանվում է 400-450 մմ-ի սահմաններում: Տարածքը քարքարոտ է, կան շատ բլուրներ, ձորեր, ձորակներ, լեռներ և անհարթ տարածություններ:

Համայնքն ունի 4395,83 հա հողատարածք, այդ թվում վարելահող 1190,47 հա, բնակավայրի նպատակային նշանակության հողեր 411,42 հա:

Թալինի բնակչությունը 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ կազել է 7318 մարդ, որից 3544 -ը տղամարդիկ են, 3774 -ը՝ կանայք ու աղջիկներ:

Բնակչության տարիքային կազմը հետևյալն է՝

- 0-4 տարեկան – 431 մարդ
- 5-7 տարեկան – 291 մարդ
- 8-15 տարեկան – 682 մարդ
- 16-62 տարեկան – 5213 մարդ
- 63 և ավելի տարեկան – 701 մարդ

Բնակչության սոցիալական կազմն այսպիսին է՝

- աշխատունակ բնակչություն – 4828 մարդ
- նպաստառուներ – 1022 մարդ
- փախստականներ – 53 մարդ
- պատերազմի մասնակիցներ – 76 մարդ

- կենսաթոշակառուների թիվը – 1086 , այդ թվում տարիքային և աշխատանքային թոշակառուներ՝ 585 մարդ
- հաշմանդամներ - 501 մարդ
- միակողմանի ծնողազուրկ երեխաներ – 34 մարդ
- ժամանակավոր կացարաններում բնակվող ընտանիքներ – 21
- գործազուրկներ – 3768 մարդ
- տնային տնտեսությունների թիվը – 1874
- ընտանեկան նպաստի համակարգում հաշվառված ընտանիքների թիվը – 400 , այդ թվում նպաստառու ընտանիքների թիվը – 260:

2.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 155000,0 հազ. դրամ է, որի մեջ սեփական եկամուտների բաժինը 30% - ի սահմաններում է:

Համայնքում կա երեք արդյունաբերական ձեռնարկություն , որոնցից մեկը ,որն զբաղվում էր ադամանդե քարերի մշակմամբ, ունենալով բավականին մեծ արտադրական հզորություն, արդեն մի քանի տարի է չի գործում, իսկ մյուս երկուսը գործում են , որոնցից մեկը զբաղվում է կաթնամթերքի արտադրությամբ, իսկ մյուսը զբաղվում է հակակարկտային կայանների արտադրությամբ: Այս երկու գործող ձեռնարկությունները իրենց արտադրանքը հիմնականում սպառում են հանրապետության տարածքում:

Համայնքի տարածքում մատուցվող հիմնական ծառայություններն են- ջրամատակարարումը, ջրահեռացումը, էներգամատակարարումը, գազամատակարարումը, կապի և փոստային ծառայությունները, որոնք իրականացվում են հանրապետությունում նշված ծառայություններն իրականացնող ընկերությունների Թալինի մասնաճյուղերի կամ տեղամասերի կողմից: Համայնքի աղբահանությունը իրականացվում է Թալինի կոմունալ ծառայություն ՀՈԱԿ –ի կողմից, իսկ տրանսպորտային ծառայությունը համայնքապետարանի և Թալինի <<ԱՏՃ>> ՓԲԸ – ի կողմից:

Համայնքում արտադրվող հիմնական գյուղատնտեսական արտադրանքը հացահատիկն է (ցորեն և գարի), կաթը և միսը: Արտադրանքի ծավալները մեծ չեն , հիմնականում ունեն սեփական սպառման նշանակություն, քանի որ ոռոգման ջրի բացակայության պատճառով հացահատիկի բերքատվությունը շատ ցածր է և ոչ երաշխավորված, անասնակերը գնովի ,որի արդյունքում ստացվում է բարձր ինքնարժեքով գյուղատնտեսական արտադրանք ,որի ծավալները տնտեսապես չափավետ չէ ավելացնել: Թալին համայնքի հողատեսքերի դիրքադրությունը բարենպաստ է հացահատիկային կուլտուրաների արտադրության և անասնապահության համար: Հացահատիկային կուլտուրաների արտադրությունն ու անասնապահությունը հանդիսանում են Թալին համայնքի տնտեսական զարգացման կանխորոշող ոլորտ : Սակայն այս երկու ոլորտները ներկայումս ունեն ցածր զարգացվածության տեմպ, որը պայմանավորված է ոլորտների ցածր կապիտալացման աստիճանով , վերանշակման տեխնոլոգիաների ու ոռոգման ջրի բացակայությամբ: Ոռոգվում է համայնքի ոռոգելի տարածքի 10%-ը ինքնահոս ջրերով: Ոռոգելի տարածքի 90%-ը չի ոռոգվում , ոռոգման ցանց չլինելու պատճառով:

Աղյուսակ 1. Համայնքի հողօգտագործման ցուցանիշները

Համայնքի հողերն ըստ նշանակության	Հա
Համայնքի վարչական տարածքը	4395.83
Գյուղատնտեսական հողեր	3785.50
Արոտավայր	2444.58
Վարելահողեր	1190.47
Խոտհարք	-----
Այլ հողեր	150.14
Բնակավայրերի հողեր	411.42
Բնակելի կառուցապատման	209.15
Հասարակական կառուցապատման	45.23
Խառը կառուցապատման	20.36
Ընդհանուր օգտագործման	59.39
Այլ հողեր	77.29
Արտադրական նշանակության հողեր	78.72
Էներգետիկայի տրանսպորտի և կապի, կոմունալ ենթակայության հողեր	23.53
Անտառային հողեր	-----
Հատուկ պահպանության	62.87
Հատուկ նշանակության	2.93
Զբային	30.86

Թալինը շնորհիվ իր աշխարհագրական դիրքի և պատմական հարուստ ժառանգության, հնարավորություն ունի վերածվելու տուրիստական համայնքի: Համայնքի զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող պատմա-մշակութային հուշարձաններից են 7-րդ դարի <<Կաթողիկե>> և <<Սուրբ Աստվածածին >> եկեղեցիները:

Թալին համայնքում տեղական ինքնակառավարումն իրականացնում են ընտրությունների արդյունքում ձևավորված տեղական իշխանությունները՝ համայնքի ղեկավարն ու համայնքի ներկայացուցչական մարմինը՝ ավագանին իր 11 անդամներով: Թալին համայնքի ղեկավարի աշխատակազմը բաղկացած է 21 հոգուց: Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը գտնվում է քաղաքի կենտրոնում, շենքի ընդհանուր վիճակը բավարար է ,աշխատակազմի համար պայմանները բավարար են, կահավորանքը մասամբ թարմացվել է: Համայնքապետարանը մասնակի հագեցած է տեխնիկայով, սակայն այն բավարար չէ աշխատակազմի լիարժեք գործունեության համար: Համայնքի սեփականություն համարվող գույքի ֆիզիկական վիճակը ներկայացվում է թիվ 2 աղյուսակում:

Աղյուսակ 2. Համայնքի սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների վիճակի գնահատում

Հ/հ	Կառույց	Հասցե	Կառուցման տարեթիվը	Ծավալը	Ընդհանուր վիճակի գնահատական	Նորոգման / վերականգնման / փոխարինման կարիք
1.	Քաղաքապետարանի վարչական շենք	Ք. Թալին Գայի փող 1	1971թ	2674.3քմ	ոչ բարվոք	Վերանորոգումը սկսվել է 2016 թ.-ին կավարտվի 2017թ.-ին
2.	Թալինի երաժշտական դպրոց	Ք. Թալին Կոմիտասի փող. 2	1973թ	973.53քմ	ոչ բարվոք	Վերանորոգումը սկսվել է 2016 թ.-ին կավարտվի 2017թ.-ին

3.	Թալինի մշակույթի տուն	Ք. Թալին Շահումյան 3	1969թ	2201.11ք մ	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել
4.	Թալինի մանկական գեղարվեստի դպրոց	Ք. Թալին Շահումյան փող. 15	1965թ	1061.51ք մ	նորոգված	հիմնանորոգվել է 2015թ.-ին
5.	Թալինի թիվ 2 մանկապարտեզ	Ք. Թալին Գորկու փող. 13	1991 թ	2068 քմ	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել
6.	Թալինի թիվ 3 մանկապարտեզ	Ք. Թալին Գայի փող. 10	1975թ	1553քմ	ոչ բարվոք	Վերանորոգումը սկսվել է 2016 թ.-ին կավարտվի 2017թ.- ին
7.	Վարչական շենք	Ք. Թալին Խանջյան փող. 9	1945թ	342.5 քմ	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել
8.	Վարչական շենք	Ք. Թալին Խանջյան փող. 8	1935թ	1339.39ք մ	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել
9.	Թալինի Գ.Ավդալյանի անվան մարզադպրոց	Ք. Թալին Գորկու փող. 11	2007թ	867 քմ	նորոգված	անհրաժեշտ է հարդարման աշխատանքներ
10	Վարչական շենք	Ք. Թալին Տերյան փող. 43	1970թ	418քմ	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել
11	Ոռոգման ջրի ներհամայնքային ցանց	Ք. Թալին	1991թ	7466 մ	ոչ բարվոք	անհրաժեշտ է փոխարինել նորով
12	Մանկական զբոսայգի	Ք. Թալին Շահումյան փող 7/1	2013թ	5453 քմ	նորոգված	Հիմնանորոգվել է 2014թ.-ին
13	Ներհամայնքային ճանապարհներ ու փողոցներ	Ք. Թալին	1960թ	42300մ	ոչ բարվոք	անհրաժեշտ է վերանորոգել
14	Համայնքի լուսավորության ցանց	Ք. Թալին		8160 մ	նորոգված	վերանորոգվել է 2013-2016թթ.-ին
15	Բազմաբնակարան շենք/կիսակառույց/	Ք. Թալին Քոթանյան 9	1990թ	1511քմ	կիսակառույց /10%/	անհրաժեշտ է ավարտել

Թալին համայնքի վարչական տարածքում գործում են երկու մանկապարտեզ, երկու հիմնական դպրոցներ, Թալինի ավագ դպրոցը և Արագածոտնի տարածքային պետական քոլեջը: Թալինում գործող երկու հիմնական դպրոցները վերանորոգվել են: Երկու դպրոցում միասին սովորում են 614 աշակերտ, աշխատում 74 ուսուցիչ, երկու դպրոցները միասին նախատեսված են 1484 աշակերտի համար: Քաղաքում գործում է մեկ ավագ դպրոց , որը հիմնանորոգված է, դպրոցում սովորում է 115 աշակերտ, աշխատում 27

ուսուցիչ: Քաղաքում գործում է նաև Արագածոտնի տարածաշրջանային քոլեջը, որտեղ սովորում է 198 աշակերտ, աշխատում 27 ուսուցիչ:

Համայնքում գործող 2 նախադպրոցական ուսումնական հաստատություններից մեկը այժմ հիմնանորոգվում է, իսկ մյուսում հաճախում է 120 երեխա, աշխատում է 23 մարդ:

Քաղաքում գործում է նաև 1 երաժշտական դպրոց, որը այժմ վերանորոգվում է, որտեղ սովորում են 110 աշակերտ աշխատում 18 մարդ: Քաղաքում գործող կրթօջախներից է նաև մանկական գեղարվեստի դպրոցը, որտեղ հաճախում է 82 երեխա, աշխատում 11 մարդ: Վերանորոգման կարիք ունի մանկապարտեզներից մեկը:

Համայնքում գործում է մեկ հիվանդանոց, որը նախատեսված է 40 հիվանդի համար, յոթ ատամնաբուժարան և չորս դեղատուն, որոնցում միասին վերցրած աշխատում են 260 մարդ, և որոնք սպասարկում են նախկին Թալինի շրջանի ավելի քան 40 համայնքների բնակչությանը: Թալինի հիվանդանոցը հիմնականում ունի արդիական բժշկական սարքավորումներով ու գույքով համալրման և կադրերի վերապատրաստման կարիք:

Համայնքն ունի նորակառույց մարզադպրոց և ֆուտբոլի մարզադաշտ: Մարզադպրոցն ունի 11 աշխատող, հաճախում են 42 երեխա: Մարզադպրոցը ունի նոր մարզագույքով համալրման կարիք: Մարզադաշտը ունի բարեկարգման և մասնակի վրանորոգման անհրաժեշտություն /կանաչապատում, հանդերձարանների կառուցում, ոռոգման ցանցի անցկացում և այլն/: Համայնքում պարբերաբար կազմակերպվում է շախմատի, ըմբշամարտի, ֆուտբոլի և կարատեի ներհամայնքային, ինչպես նաև հանրապետական կարգի մրցումներ:

Համայնքում աղբը տեղափոխվում և կուտակվում է կենտրոնացված աղբավայրում, որտեղ պարբերաբար կատարվում է բնահողով ծածկում ու սանիտարական այլ միջոցառումներ: Աղբահանումն իրականացվում է բավարար տեխնիկայի պայմաններում, փողոցների մի մասում և բազմաբնակարան շենքերի մոտ տեղադրված են աղբամաններ, բնակիչները աղբը լցնում են աղբամանների մեջ, որտեղից աղբահավաք մեներենան հավաքում է աղբը:

Համայնքում կա 976 առանձնատուն 138095 քմ տարածքով և թվով 31 բազմաբնակարան շենք՝ 898 բնակարաններով:

Համայնքի զարգացման համար էական նշանակություն ունի Քոթանյան 9 հասցեում գտնվող 1511 քմ ընդհանուր մակերեսով կիսակառույց բազմաբնակարան շենքի շինարարության վերսկսումը և Խանջյան 28 հասցեի փլուզման եզրին գտնվող բազմաբնակարան շենքի հիմնանորոգումը, որի դեպքում կլուծվի ինչպես համայնքի բնակարանի կարիք ունեցողների խնդիրը, այնպես էլ կլուծվի աշխատատեղերի, արտագաղթի և քաղաքի արտաքին տեսքի բարելավման խնդիրը:

Թալին համայնքն ունի ներհամայնքային 42.3 կմ փողոցներ և ճանապարհներ: Ճանապարհների և փողոցների մեծ մասն անբարեկարգ է: Քաղաքի ընդհանուր տեսքի համար փողոցների բարեկարգումը:

Թալին համայնքում առևտուրն իրականացվում է անհատ ձեռնարկատերերի և մասնավոր կազմակերպությունների կողմից: Քաղաքում գործող 108 ձեռնարկություններից 76-ը առևտրային են, 22-ը ծառայություններ մատուցող, մնացածը հացի, լիմոնադի և այլ արտադրամասեր են:

Քաղաքը հարուստ չէ մշակութային օջախներով, ունի մեկ մշակույթի կենտրոն, որտեղ գործում են ժամամակակից և ժողովրդական երգի-պարի խմբեր, որոնցում ընդգրկված են շուրջ 100 երեխա, աշխատում է 12 մարդ: Մշակութային կառույցը գտնվում է շատ վատ վիճակում, կարիք ունի վերանորոգման, գազաֆիկացման, լոկալ ջեռուցման, ինչպես նաև կահավորման: Համայնքի մշակութային միջոցառումները հիմնականում կազմակերպվում են մշակույթի կենտրոնի դահլիճում, երբեմն էլ քաղաքի հրապարակում:

Համայնքում կա 2 զբոսայգի, մեկը քաղաքային , մյուսը մանկական: Մանկական զբոսայգին հիմնանորոգվել է, իսկ քաղաքային զբոսայգին ունի բարեկարգման և խաղահրապարակների կառուցման կարիք:

Համայնքում կան 4828 աշխատունակ մարդիկ, որոնցից 3768-ը գործազուրկ են:

Համայնքի 303 ընտանիքներ հաշվառված են ընտանեկան նպաստի պետական համակարգում, որոնցից սոցիալապես անապահովության նպաստառուներ են գնահատվել 255 ընտանիքները: Համայնքում բնակվում են 53 փախստականներ և միակողմանի ծնողազուրկ 34 երեխա:

2.3 ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ

Թալին համայնքում ընթացքի մեջ է 2016թ.-ին սկսված և 2017թ.-ին շարունակվող 3 ծրագիր՝

Թալինի թիվ 3 մ/մանկապարտեզի հիմնանորոգման ծրագիրը, որը ֆինանսավորվում է Թալինի համայնքապետարանի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից.

Թալինի մանկական երաժշտական դպրոցի հիմնանորոգումը, որը ֆինանսավորվում է արտասահմանյան բարերարի կողմից.

Թալինի համայնքապետարանի վարչական շենքի հիմնանորոգման ծրագիրը, որը ֆինանսավորվում է ՀՀ կառավարության և Համաշխարհային բանկի կողմից:

Պետության, դոնոր կազմակերպությունների և այլ շահագրգիռ անձանց կողմից ներդրումներ ապահովելու նպատակով Թալինի համայնքապետարանը նախատեսում է 2017-2021թթ.-ին սերտորեն համագործակցել ՀՀ Արագածոտնի մարզպետարանի, ինչպես նաև այլ կազմակերպությունների և անձանց հետ 2017-2021թթ.-ին համայնքում հետևյալ ծրագրերը իրականացնելու համար.

- Թալին քաղաքի մշակույթի կենտրոնի վերանորոգում՝ ծրագրի նպատակը մշակույթային միջոցառումների կազմակերպման համար պատշաճ շենքային պայմանների ապահովումն է, որի արդյունքում մշակույթի տունը կունենա բարեկարգ շենքային պայմաններ և դահլիճ տարբեր միջոցառումներ կազմակերպելու և անցկացնելու համար, ինչն էլ իր հերթին կաշխուժացնի համայնքի մշակույթային կյանքը
- Ռոզգման ցանցի վերանորոգում և նոր ցանցի կառուցում՝ ծրագրի նպատակը համայնքի բնակչությանը ոռոգման ջրով ապահովելն է, որը հնարավորություն կտա ստանալու բարձրորակ ապրանքային բերք, որը կիրացվի շուկայում և կդառնա եկամտի աղբյուր ընտանիքի խնդիրները լուծելու համար
- Փողոցների գիշերային ցանցի լուսավորության անցկացում՝ ծրագրի նպատակը ունենալ լուսավոր փողոցներ գիշերային ժամերին բնակչության տեղաշարժը անվտանգ դարձնելու, ինչպես նաև կհանդիսանա նպաստավոր պայման զբոսաշրջության զարգացման համար
- Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում՝ ծրագրի նպատակը ներհամայնքային փողոցները բերել բարեկարգ վիճակի (ասֆալտապատում և կանաչապատում), որը ենթադրում է վերացնել փողոցների ջրափոսերը և դրանք դարձնելով անցանելի ու հարմարավետ հետիոտների և տրանսպորտային միջոցների համար տարվա բոլոր եղանակներին
- Անավարտ բազմաբնակարանային շենքերի շինարարության վերսկսում՝ ծրագրի նպատակն է վերսկսել Քոթանյան 9 հասցեի 1511 քմ ընդհանուր մակերեսով կիսակառույց բազմամբնակարան շենքի շինարարությունը, ինչպես նաև հիմնանորոգել Խանջյան 28 հասցեի բազմաբնակարան շենքը, ժամանակավոր կացարաններում բնակվող մարդկանց բնակարանով ապահովվելու, ինչպես նաև բնակտարածքի բարելավման կարիք ունեցող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավելու համար, որը կհանգեցնի

ծնելիության խթանման, աշխատատեղերի սրելծման, արտագաղթի կրճատման և քաղաքի արտաքին տեսքի բարելավման:

2017-2021թթ. ընթացքում նախատեսվում է շարունակել համագործակցությունը համայնքի և ՀՀ Արագածոտնի մարզում գործունեություն ծավալող միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի սուբյեկտների, այլ կազմակերպությունների և անհատների հետ: Համայնքի տարածքում շարունակվող ծրագրերը ներկայացված են կից աղյուսակում / տես աղյուսակ 3/:

Աղյուսակ 3. 2016թ.-ին համայնքում իրականացված և շարունակվող ծրագրեր

Հ / Հ	Ծրագրի անվանումը	Ավարտված / ընթացիկ/	Ֆինանսավորումը			Արդյունքները համառոտ
			համայնքի բյուջեից	պետ. բյուջեից	այլ դոնորներից /նշել	
1	Գյուղ. տեխնիկայի և գյուղ. գործիքների ձեռքբերում և հեռավոր արոտների ջրարբիացում ՀԳՌԿՄ-2	ընթացիկ	3800,0 հազ.դրամ	43500,0 հազ. դրամ	<<Թալին և ընկերներ >> զարգացման հիմնադրամ 1400,0 հազ.դրամ	Ծրագրի արդյունքում ջրարբիացվել է հեռավոր արոտները , ձեռք է բերվել ինը միավոր գյուղ. տեխնիկա և գործիքներ /5 հատ խոտհնձիչ, մեկ հատ մամլիչ բարդուցիչ ,մեկ հատ կուլտիվատոր , մեկ հատ շարքացան, մեկ հատ գութան / ծրագիրը գալիք 5 տարիներին շարունակվելու է
2	Թալինի թիվ-3 մանկապարտեզի հիմնանորոգում ՀՏԶՀ	ընթացիկ	6300,0 հազ.դրամ	167000,0 հազ. դրամ	Վարդանանց ասպետներ 6300 ,0հազ. դրամ	2016թ.-ին սկսվել է և 2017 թ.-ին շարունակվելու է Թալինի թիվ-3 մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները
3	Համայնքապետարանի վարչական շենքի վերանորոգում	ընթացիկ		103000,0 հազ.դրամ	համաշխարհային բանկ 20600,0 հազ. դրամ	2016թ.-ին սկսվել է 2017թ.-ին շարունակվելու է համայնքապետարանի վարչական շենքի հիմնանորոգման աշխատանքները
4	Թալինի երաժշտական դպրոցի վերանորոգում	ընթացիկ			Ամերիկահայ բարերար Վազգեն Քարյան 80700,0 հազ. դրամ	2016թ.-ին սկսվել և 2017թ.-ին շարունակվելու է երաժշտական դպրոցի վերանորոգման աշխատանքները
5	Գիշերային լուսավորության անցկացում	ընթացիկ	4800,0 հազ. դրամ			2016թ.-ին փողոցների գիշերային լուսավորություն է անցկացվել 1102մ ընդհանուր երկարությամբ համայնքի երեք փողոցներում .գալիք 5 տարիներին ծրագիրը շարունակվելու է

2.4. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի բյուջեի եկամուտները ձվավորվում են վարչական և ֆոնդային բյուջեների միջոցների հաշվին: Գալիք 5 տարիներին ակնկալվում է համայնքի բյուջեի սեփական եկամուտների աճ : Համայնքապետարանի սեփականության հանդիսացող հողի և գույքի արդյունավետ օգտագործման, հարկերի, տուրքերի և վարձավճարների գանձման աշխատանքների արդյունավետության բարձրացման շնորհիվ: Սեփական եկամուտները 2016 թ. կազմում են համայնքի բյուջեի եկամուտների 30 %-ը, իսկ ֆինանսական համահարթեցման դոտացիաները՝ 70 %-ը (աղյուսակ 4):

Համայնքի բյուջեի եկամուտների նախորդ տարիների փաստացի մակարդակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք աճ ունեն:

Աղյուսակ 4. Համայնքի 2015-2016թթ. բյուջեների մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը հազար դրամ

Հ/հ	Մուտքերի անվանումը	2015թ. փաստ.	2016թ. նախատ.	2016թ. փաստ.	2017թ. նախատ.	2018թ. կանխ.	2019թ. կանխ.	2020թ. կանխ.	2021թ. կանխ.
1	2	3	4	5	6	7	8	9	
	ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՄՈՒՏՔԵՐԻ ԸՆԴԱՄԵՆԸ (I+II+III)*	148564.4	155229.5	155229.5	157050.0	158530.0	160170.0	162010.0	165100.0
I.	ԸՆԴԱՄԵՆԸ ԵՎԱՍՈՒՏՆԵՐ (1+2+3)*	118255.8	123609.5	123609.5	124503.2	125630.0	1127370.0	1129010.0	131750.0
1.	ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	29345.0	31620.0	31620.0	32360.0	32600.0	32800.0	33000.0	33350.0
1.1	Գույքային հարկեր անշարժ գույքից	7160.0	7520.0	7520.0	7700.0	7800.0	7850.0	7900.0	7950.0
	Գույքահարկ շենքերի և շինությունների համար	2000.0	2000.0	2000.0	2100.0	2200.0	2250.0	2300.0	2350.0
	Հողի հարկ	5160.0	5520.0	5520.0	5600.0	5600.0	5600.0	5600.0	5600.0
1.2	Գույքային հարկեր այլ գույքից	12885.0	14980.0	14980.0	15500.0	15600.0	15700.0	15800.0	16000.0
	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	12885.0	14980.0	14980.0	15000.0	15600.0	15700.0	15800.0	16000.0
1.3	Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	4300.0	4120.0	4120.0	4160.0	4200.0	4250.0	4300.0	4400.0
	Տեղական տուրքեր	4300.0	4012.0	4012.0	4160.0	4200.0	4250.0	4300.0	4400.0
1.4	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0
	Պետական տուրքեր	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0	5000.0
2.	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	77639.6	10146.1	10144.6	10234.0	10328.0	10432.0	10546.0	10720.0
2.3	Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ	77639.6	10146.1	10144.6	10234.0	10328.0	10432.0	10546.0	10720.0
ա)	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	69070.0	80032.9	80032.9	80800.0	81600.0	82500.0	83500.0	85000.0
բ)	Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ	0	17412.2	117412.2	7500.0	17600.0	17700.0	17800.0	18000.0
գ)	Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	8569.6	4001.0	4001.0	040.0	4080.0	4120.0	4160.0	4200.0
3.	ԱՅԼ ԵՎԱՍՈՒՏՆԵՐ*	11271.2	22163.2	22163.2	22350.0	22650.0	23050.0	23550.0	24550.0
3.3	Գույքի վարձակալությունից եկամուտներ	4900.0	5000.0	5000.0	5100.0	5200.0	5300.0	5400.0	5500.0
	Համայնքի սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	900.0	900.0	900.0	900.0	900.0	900.0	900.0	900.0
	Այլ գույքի վարձակալությունից մուտքեր	4000.0	4100.0	4100.0	44200.0	4300.0	400.0	4500.0	5000.0

3.4	Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից, այդ թվում	2663.6	5363.2	5363.2	5400.0	5500.0	5700.0	6000.0	6500.0
	Պետության կողմից ՏԻՄ-երին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ	2663.6	5363.2	5363.2	5400.0	5500.0	5700.0	6000.0	6500.0
	Վարչական իրավախախտումների համար ՏԻՄ-երի կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	0.0	150.0	150.0	150.0	150.0	150.0	150.0	150.0
3.9	Այլ եկամուտներ*	3707.6	11650.0	11650.0	11700.0	11800.0	11900.0	1200.0	12500.0
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր	6382.0	7800.0	5904.0	7850.0	8000.0	8100.0	8200.0	8300.0
	Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ	3707.6	11650.0	11650.0	11700.0	11800.0	11900.0	12000.0	12500.0
II.	ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ ՄՈՒՏՔԵՐ (1+2+3+4)	26000.0	8500.0						
1.	Հիմնական միջոցների իրացումից մուտքեր	1000.0	1000.0	1000.0	1200.0	1200.0	1300.0	1400.0	1400.0
	Այլ հիմնական միջոցների իրացումից մուտքեր	1000.0	1000.0	1000.0	1200.0	1200.0	1300.0	1400.0	1400.0
	Հողի իրացումից մուտքեր	25000.0	7500.0	8000.0	9000.0	9000.0	10000.0	11000.0	11100.0
III.	ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՎԵԼՈՒՐԴԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՄ ՊԱԿԱՍՈՒՐԴԻ (ՂԵՖԻՑԻՏԻ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ (Ա+Բ)	4308.6	6999.6	10000.0	10000.0	11000.0	1000.0	12000.0	12000.0
Ա.	ՆԵՐՔԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ (1+2)	4308.6	6999.6	10000.0	10000.0	11000.0	1000.0	12000.0	12000.0
2.	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐ	4308.6	6999.6	10000.0	10000.0	11000.0	1000.0	12000.0	12000.0
2.3	Համայնքի բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդը	4308.6	6999.6	10000.0	10000.0	11000.0	1000.0	12000.0	12000.0

2.5.ԶԱՐԳԱՑՆԱՆ ԽՈՉՆՂՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի զարգացման համար հիմնական խոչընդոտներն ու դժվարություններն են՝

- համայնքի ֆինանսական միջոցների սղությունը
- ոռոգման ջրի և ցանցի անբավարար վիճակը կամ բացակայությունը
- գյուղատնտեսական տեխնիկայի անբավարար վիճակը կամ բացակայությունը
- համայնքում առկա արդյունաբերական ձեռնարկությունների ոչ լրիվ հզորությամբ գործելը կամ

ընդհանրապես չգործելը

- ներքաղաքային ճանապարհների անբավարար վիճակը:

Վերը նշվածի արդյունքում հանայնքում բարձր է գործազրկության և արտագաղթի մակարդակը:

2.6.ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Համայնքի ուժեղ կողմերն են՝

- Քաղաքի աշխարհագրական դիրքը ռազմավարական նշանակություն ունի. գտնվում է Հյուսիս-Հարավ միջպետական մայրուղու հարևանությամբ

- Պատմամշակութային ու բնական հարուստ ժառանգության առկայությունն ու մշակութային հարուստ ավանդույթները
- Քաղաքի գրավիչ ճարտարապետական տեսքը
- Տուրիզմի զարգացման հնարավորությունները
- Տարածաշրջանային հիմնարկ-ձեռնարկությունների և կազմակերպությունների առկայությունը
- Տարածաշրջանում հասարակական կազմակերպությունների լայն սպեկտրի առկայությունը, ինչպես նաև բանկերի և վարկային կազմակերպությունների առկայությունը
- Լրատվամիջոցների առկայությունը

- Փոքր և միջին բիզնեսում բնակչության որոշակի ներգրավվածությունը
- ՏԻՄ-երի և բնակչության սերտ կապը
- Արտադրական ձեռնարկությունների առկայությունը

Համայնքի թույլ կողմերն են՝

- Գործազրկության բարձր մակարդակը և աշխատատեղերի պակասը
- արտագաղթը, հատկապես երիտասարդների շրջանում
- կոմունիկացիոն ենթակառուցվածքների ոչ բարվոք վիճակը, մասնավորապես կոյուղացանցի վատթար վիճակը
- բնակարանի կարիք ունեցող երտասարդ ընտանիքների մեծ թիվը
- փողոցների ոչ բարվոք վիճակը
- բազմաբնակարան շենքերի տանիքների, մուտքերի վատթար վիճակը

Համայնքի զարգացման հնարավորություններն են՝

- Զբոսաշրջության զարգացումը
- Գյուղատնտեսության զարգացումը և դրա հիման վրա գյուղմթերքների վերամշակման փոքր արտադրությունների ընդլայնման հնարավորությունը
- Տեղացի և սփյուռքահայ ներդրողների համար փոքր և միջին բիզնեսը ընդլայնելու նպատակով հնարավորությունների ստեղծումը
- Համայնքում գործող արտադրական ձեռնարկությունների արտադրական կարողությունների ավելացումը և չգործող արտադրական ձեռնարկությունների վերագործարկումը:

Համայնքին սպառնացող հիմնական վտանգներն են՝

- Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, երաշտ)
- Գործազրկության մակարդակի աճը
- Բնակֆոնդի վիճակի վատթարացումը
- Արտագաղթը

3 ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱԿՈՐՈՒՄ

3.1.ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ

Համայնքի զարգացման տեսլականն է՝

Թալինը դարձնել բնակչությանը և զբոսաշրջիկներին որակյալ ծառայություններ մատուցող և սոցիալ – տնտեսական բնականոն զարգացում ունեցող համայնք:

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ ռազմավարությունը՝

- Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի եկամուտների գանձման, արդյունավետ քաղաքականություն
- Ըստ հնարավորինս խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ
- Պահպանել համայնքի ճարտարապետության արդի ոճը, բացառել ինքնակամ շինարարությունը և ապօրինի հողազավթումները
- Բարելավել կրթական և մշակութային ոլորտի համայնքային կազմակերպությունների գործունեությունը՝ մշտապես հարստացնելով նրանց նյութատեխնիկական բազան
- Շարունակել և աստիճանաբար ընդլայնել համայնքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքները
- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր
- Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝ նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը
- Ջարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների սերտ համագործակցությունը:
- Թալինի տարածքային և տնտեսական զարգացման գործում կարևոր է հաշվի առնել համայնքի բնակչության հեռանկարային աճը, որը ելնում է քաղաքի հեռանկարային տարածքային զարգացման հաշվարկված հնարավորություններից: Ըստ այդ հաշվարկների, քաղաքի տարածքում կարող է բնակվել առավելագույնը 15.0 հազ. մարդ՝ չխախտելով տարածքի էկոլոգիական հավասարակշռությունը, ընդ որում աճի տեմպերի համար ժամկետներ չեն կանխատեսվում, քանի որ այն կախված է հանրապետության ընդհանուր տնտեսական զարգացման տեմպից, քաղաքական իրավիճակից, բնակչությանը աշխատատեղերով ապահովելու մակարդակից:
- Հնարավորինս նպաստել գյուղատնտեսության զարգացմանը և այդ համատեքստում նկատի ունենալ ոռոգման ցանցի հիմնանորոգումը և գյուղատնտեսական տեխնիկաների և գործիքների ձեռքբերումը
- Արտադրական ձեռնարկությունների հնարավորությունների ընդլայնումը և չգործող արտադրական ձեռնարկությունների վերագործարկումը
- Թալին համայնքում աշխատատեղերի մեծ քանակ կարելի է ակնկալել նախկինում գործող արտադրական ձեռնարկությունների, բնական ռեսուրսների, հիմնականում սպասարկման, հումքային, գյուղատնտեսության հնարավորությունները ռացիոնալ օգտագործելով: Ջարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը:

Վերը նշված ծրագրերի իրականացման արդյունքում, առաջիկա հինգ տարիներին համայնքում ակնկալվում է աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների թվի շուրջ 30%-ով կրճատում, համայնքի սեփական եկամուտների 2-3% աճ, համայնքի բնակչության թվի տարեկան 5-7% աճ:

3.2 ՀԱՄԱՅՆՔԻ ՋԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Համայնքի զարգացման 2017-2021 թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն են՝

- Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ
- Ունենալ բարեկարգ բնակարանային ֆոնդ
- Բնակչության կենսամիջավայրի բարելավում (կանաչապատում)
- Բնակչությանը մատուցվող ծառայությունների (կրթության, ջրամատակարարման, աղբահանության և այլն) շրջանակի ընդլայնում և որակի բարձրացում
- Համայնքում աշխատատեղերի ստեղծում՝ գյուղատնտեսության զարգացման, արտադրական ձեռնարկությունների հնարավորությունների ռացիոնալ օգտագործման և չգործող արտադրական ձեռնարկությունների վերագործարկման հիման վրա:
- Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների սերտ համագործակցությունը:

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-երի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, ՀՀԶԾ-ի կառավարման հանձնաժողովի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը (աղյուսակ 5)՝ ընդգրկելու համայնքի 2017-2021թթ. ՀՀԶԾ-ում: Այդ ծրագրերի մի մասի իրականացումը համարվում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություն, իսկ մյուս մասը դուրս է վերջիններիս լիազորությունների շրջանակից, սակայն դրանց իրականացումը խիստ կարևոր նշանակություն ունի բնակչության բարեկեցության ապահովման համար:

Աղյուսակ 5. ՀՀԶԾ-ում ընդգրկելու համար առաջարկվող ծրագրերի ցանկ

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
	<i>ՏԻՄ-երի լիազորություններ</i>	191500.0 (տարեկան + 1 % աճ)
1	Կառավարման ապարատի պահպանում	146000.0 (տարեկան + 1 % աճ)
2	Համայնքի մանկապարտեզների պահպանում	78000.0 (տարեկան + 1 % աճ)
3	Համայնքի երաժշտական դպրոցի պահպանում	45000.0 (տարեկան + 1 % աճ)
4	Մարզադպրոցի պահպանում	58000.0 (տարեկան + 1 % աճ)
5	Մշակույթի կենտրոնի պահպանում	21000.0 (տարեկան + 2 % աճ)
6	Գրադարանի պահպանում	468000.0 (տարեկան + 1 % աճ)
7	Գեղարվեստի դպրոցի պահպանում	135000.0 (տարեկան + 1 % աճ)
8	Կոմունալ ծառայության իրականացում	135000.0 (տարեկան+ 1 % աճ)
9	Համայնքի բնակչությանը սոցիալական օգնության տրամադրում	135000.0(տարեկան + 200 հազ. դրամ % աճ)
10	Ոռոգման ջրի ցանցի վերանորոգում և նոր ցանցի կառուցում	100000.0
11	Մշակույթի կենտրոնի վերանորոգում	150000.0
12	Անավարտ բազմաբնակարան շենքերի շինարարության վերսկսում	650000.0
13	Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում	200000.0
14	Նոր գերեզմանատան կառուցում	6000.0

15	Քաղաքի միջով անցնող ձորի սանմաքրում	4000.0
16	Փողոցների գիշերային լուսավորության անցկացում	10000.0
17	Քաղաքային զբոսայգու բարեկարգում	6000.0
18	Քաղաքապետարանի դահլիճի գույքի /նստարաններ/ ձեռքբերում	3000.0
19	Ֆուտբոլի մարզադաշտի վերանորոգում	8000.0
20	Համայնքի աղբավայրի ցանկապատում	2000.0
21	Գյուղմթերքների վաճառքի տաղավարների տեղադրում	2500.0
22	Կենդանիների սպանդանոցի կառուցում	60000.0
23	Կանաչ գոտիների ստեղծում՝ մայթերին ծառատունկ կատարելով	1800.0
24	Խաղահրապարակների ստեղծում	10000.0
25	Բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգում	8000.0
26	Բազմաբնակարան շենքերի վերանորոգում	160000.0
27	Մշակույթի կենտրոնի գույքի և սարքավորումների համալրում	8000.0
28	Երաժշտական դպրոցի գույքի և գործիքների համալրում	3050.0

Ծրագրերը սահմանելուց հետո դրանք գնահատվել են ըստ առաջնահերթության՝ հիմք ընդունելով հետևյալ չափորոշիչները.

- Շահառուների թիվ
- Համայնքի կարողությունների հզորացում
- Իրատեսականություն
- Հրատապություն

Ըստ սահմանված չափորոշիչների ծրագրերը գնահատվել են առավելագույնը 10 բալանոց սանդղակով: Գնահատականները ներկայացված են աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 6. Ծրագրերի առաջնահերթությունների որոշում

Հ/հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)	Գնահատման չափանիշներ (0-10 բալլ)				Ընդամենը (բալլ)	Ընդամենը առաջնահերթությունը
			Շահառուների թիվ	Համայնքի կառուցվածքային զորացում	Իրատեսակականություն	Հրատարակություն		
1	Կառավարման ապարատի պահպանում	191500.0	x	x	X	x	x	1
2	Կոմունալ ծառայության իրականացում	135000.0	x	x	x	x	X	2
3	Համայնքի մանկապարտեզների պահպանում	146000.0	x	x	x	x	x	3
4	Համայնքի երաժշտական դպրոցի պահպանում	78000.0	x	x	x	x	x	4
5	Մշակույթի կենտրոնի պահպանում	58000.0	x	x	x	x	x	5
6	Մարզադպրոցի պահպանում	45000.0	x	x	x	x	x	6
7	Գեղարվեստի դպրոցի պահպանում	46800.0	x	x	x	x	x	7
8	Գրադարանի պահպանում	21000.0	x	x	x	x	x	8
9	Համայնքի բնակչությանը սոցիալական օգնության տրամադրում	13500.0	x	x	x	x	x	9
10	Ոռոգման ջրի ցանցի վերանորոգում և նոր ցանցի կառուցում	100000.0	9	9	5	9	32	13
11	Մշակույթի կենտրոնի վերանորոգում	150000.0	5	7	7	7	26	19
12	Անավարտ բազմաբնակարան շենքերի շինարարության վերսկսում	650000.0	5	6	2	9	22	22
13	Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում և ասֆալտապատում	200000.0	9	8	5	6	28	18
14	Նոր գերեզմանատան կառուցում	6000.0	9	9	6	9	33	11
15	Քաղաքի միջով անցնող ձորի սանմաքրում	4000.0	8	2	5	6	21	25
16	Փողոցների գիշերային լուսավորության անցկացում	10000.0	9	8	5	7	29	17
17	Քաղաքային զբոսայգու բարեկարգում	6000.0	8	6	4	4	22	23
18	Քաղաքապետարանի դահլիճի գույքի /նստարաններ/ ձեռքբերում	3000.0	5	5	4	4	16	35
19	Ֆուտբոլի մարզադաշտի վերանորոգում	8000.0	6	5	5	4	20	28
20	Համայնքի աղբավայրի ցանկապատում	2000.0	5	2	6	5	18	32
21	Գյուղմթերքների վաճառքի տաղավարների տեղադրում	2500.0	5	3	4	4	16	38
22	Կենդանիների սպանդանոցի կառուցում	60000.0	4	2	4	4	14	41
23	Կանաչ գոտիների ստեղծում՝ մայթերին ծառատունկ կատարելով	1800.0	7	2	9	7	25	21

24	Խաղաիրապարակների ստեղծում	10000.0	8	1	5	7	21	24
25	Բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգում	8000.0	7	5	5	2	19	30
26	Բազմաբնակարան շենքերի վերանորոգում	160000.0	5	3	5	4	17	34
27	Մշակույթի կենտրոնի գույքի և սարքավորումների համալրում	8000.0	5	7	7	7	26	20
28	Երաժշտական դպրոցի գույքի և գործիքների համալրում	3050.0	6	7	9	8	30	16

